

ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Ինչո՞ւ համար է այնքան ցաւերով լի այս կեանքը, որն է սրա նպատակը, որտեղից է գալիս մարդը, և ո՞ւր է տանում նրան իր ճակատագիրը։ Ահա հարցեր, որ մարդկութեան լաւագոյն միտքը յեղեղել է իր մանուկ օրերից մինչև այժմ։ Կրօններն ու փիլիսոփայական սիստեմները փոխառփոխ ձեռք են առել մարդկային ճակատագրի վրայ ծանրացած այս պրոբլեմները, իւրաքանչիւրը իր ձևով աշխատել է պատասխանել և լուծել այս հանգույցները, իւրաքանչիւրը հռչակել է իրան որպէս միակ կարողութիւն, որ բռնած ունի բնութեան մեծ գաղտնիքը։ Եւ սակայն անթիւ սերունդներ յաջորդել են իրար, երկիրը ծածկուել է ճշմարտութեան ծարաւ՝ անյոյս կամ յուսախաբ մեռածների աճիւններով, բայց կեանքի մեծ սուեղծութեամբ, որ ծածկած ունի համր գաղտնիքը, դեռ մնում է անլուծելի։ Եւ բնութիւնը՝ անորոշութեան և անդրչիրմեան սարսափի առաջ դողացող մարդի տառապանքներին կարծես սնգիտակից այսօր էլ, ինչպէս միլլիոնաւոր տարիներ առաջ՝ ընթանում է իր ճանապարհով՝ առանց մի վայրկեան խախտելու իր օրէնքներից ամենաշնչինը։

Եւ մարդկութիւնը նրա ծոցում տառապում է և անցնում առանց գիտենալու, թէ ո՞ւր և ինչո՞ւ համար։

Սակայն մարդկային հոգին չի դադարել խորհելուց, իր վրայ ծանրացող այս առեղծուածային ճակատագրի առաջ դեռազանցօրէն ըմբոստ ու անհանգիստ, խուսափող ճշմարտութեանը ծարաւ, նա անթիւ դարեր շարունակ յանդուգն թափով փորձել է սաւառնել անհունի վրայ և սեփական աչքով տես-

ներ, թէ ինչ է սպասում իրան: Ոչնչութիւնը, անդառնալի ջրնջումը, որ այնպէս յամառ կերպով կապուած է մահուան պատկերի հետ, նրան սոսկում է պատճառել: Հոգին փնտրել է մի տեղ տիեզերքի մէջ, ուր կարելի լինէր մահից փրկուել, մի լուգիկա, որ հնարաւոր դարձնէր իր անմահութիւնը և ջնջէր մահուան սարսափը:

Իր անվերջ խոյզ ու խնդիրների ընթացքում մարդը մերթ երեակայել է հոգու և մարմնի, անցնող նիւթի և անանց, անմահ ներքին կարողութեան անտագոնիզմը, մերթ յուսահատ ու յոգնած՝ նետուել է յոռետեսութեան գիրկը և այնտեղ լացել իր սև ճակատագիրը: Գուցէ բոլոր կրօնները, բոլոր փիլիսոփայական սիստեմները արդիւնք են մարդկային հոգու այս երկու կացութեան, նրա յոյսերի և յուսախաբութեան: Բայց հէնց այն հանգամանքը, որ փիլիսոփայական սիստեմները չափազանց արագութեամբ են յաշորդել իրար, և որ իւրաքանչիւր ժողովուրդ, նոյնիսկ իւրաքանչիւր մարդկային սերունդ իր առանձին կրօնն է ունեցել, ամենահզօր ապացոյցն է, որ հին առեղծուածը անլուծելի է, և մարդը այսօր էլ՝ ինչպէս հազարաւոր դարեր առաջ՝ չը գիտէ, որտեղից է գալիս, ուր է գնում, ինչու է տառապում, և որն է այս կեանքի նպատակը:

Շատերից յետոյ այժմ յայտնի գիտնական Մեչնիկովն է գալիս այդ հարցերին պատասխանելու իր մի նորագոյն աշխատութեան մէջ ^{*)}, որ այնպէս մեծ ազմուկ հանեց բոլոր քաղաքակիրթ շրջաններում:

Քիչ անգամ մի գիտնական հեղինակ մի հատիկ աշխատութեան մէջ շօշափել է այնքան առաջնակարգ կարևորութիւն ունեցող խնդիրներ, ինչպէս այդ արել է Մեչնիկով մարդկային բնութեանը նուիրած իր այս ուսումնասիրութեան մէջ: Կրօններ, փիլիսոփայական կարևոր սիստեմներ, գիտութիւն, գեղարուեստ, բարոյագիտութիւն, հասարակական բաղմաթիւ առաջնակարգ արժէք ունեցող խնդիրներ, այս բոլորը փոխադրիս հանդէս են գալիս նրա հետաքրքիր գրքի էջերում, և ականաւոր հեղինակը նրանց լուսաբանութեան համար գործ է դրել գիտնականի բոլոր բարեխղճութիւնը՝ միացած իր հանրամասնօթ տաղանդին ու հմտութեանը: Որպէս բժիշկ-բնագէտ նա առանձին ուշադրութիւն է դարձրել իհարկէ բժշկականութեան վրայ, բայց ոչ թէ զուտ գիտնական, այլ աւելի շուտ հասարակական տեսակետից. նա աշխատել է սահմանել բժշկականութեան դերը

^{*)} Etudes sur la nature humaine. Essai de philosophie optimiste par Elie Metchnikoff. Paris, 1903.

մարդկային բնութեան, նրա մորալի հաւանական էվոլյուցիայի մէջ:

Իր քննական մասի մէջ վերին աստիճանի համոզիչ ու խոհուն, եզրակացութիւններն մէջ խոյաթուիչ, յախուռն և վէճերի տեղի տուող, Մեչնիկով իր այս աշխատութեամբ սակայն մարդու ընկճում, խոնարհեցնում է այն մեծ հաւատով, որ նա տածում է գէպի գիտութեան փրկարար ոյժը, գէպի նրա վերանորոգիչ առաքելութիւնը, նրա ղանդաղ, բայց վերջնական յաղթանակը: Թւում է թէ խօսողը մի առաքեալ է, մի ջերմ հաւատացեալ, որ տառապող, խաւարում խարխալող մարդկութեանը եկել է փրկութեան ճանապարհը ցոյց տալու: Հին դարերի եկեղեցւոյ հայրերը—մի ուրիշ Գրիգոր Լուսաւորիչ, ու Օգոստինոս կամ Ագոստինոսի աւելի համոզիչ և աւելի անկեղծ լեզուով չէին կարող խօսել:

Այս համեմատութիւնն ինձ թւում է յաջողուած: Արդարեւ Միչնիկովի գիրքը ժամանակի նշան է, եթէ չ'ստեմ պահանջ, ժամանակակից մարդկութիւնը գտնւում է կարծես այն անցողական շրջաններից մէկում, երբ միտքը հնից մերկայած, նախկին հաւատալիքները մերժած, ներկայից անբաւական, գէպի առաջ է նայում անհանգստութեամբ և դեռ վերջնականապէս չի որոշել իր անելիքը: Անցողական շրջաններին յատուկ հոգեկան այդ անհանգստութիւնը ներկայումս արտայայտւում է բոլոր քաղաքակիրթ հասարակութիւնների մէջ, մարդիկ ապրում են տենդով, հեխն, դժգոհ են ու ներկային: Բոլոր դողմատիկ ճշմարտութիւնները, բոլոր յուսատու թէորիաները, բոլոր մտաւոր հոսանքները խախտուած և իրար են խառնուած, դադարների և հասարակական տենդենցիաների բաղխումը համարեա տարերային է. ոչինչ կայուն, ոչինչ հաստատուն, և չը կայ մի զօրեղ հոսանք, որ քաշի իր յետեից մնացածներին: Մարդիկ խարխալում են:

Հիւանդոտ, ներկային մի ժամանակ, երբ այն ամենը, ինչ անօրինակօրէն նոր է, անքննադատ, համարեա կրքոտ սիրոյ առարկայ է դառնում. մարդիկ վարում են նրանց, ինչպէս թիթեռները ճրագի լոյսին, արագութեամբ ճաշակում են յանկարծական էկստազը և արագ կերպով յոգնած ու զգուած՝ երես դարձնում, սպասելով էլի մի նոր բանի: Փիլիսոփայութեան, գեղարուեստի, գրականութեան, անգամ սուսկի պէս բուռնող կրօնական հերձուածների մէջ արտայայտւում է անորոշի յետեից վազող մտքի ծարաւը, հեխն, վայրկեաններով ապրող, տառապող մարդը, որ փնտրում է, պրպտում է և դժգոհ է:

Ամբողջ դարեր գերազոյն ճշմարտութեանը հետամուտ

միտքն է այն, որ յոգնաց՝ դալարուում է իր վրայ վիրաւոր օձի պէս, դժգոհ է իրանից, աշխարհից, շրջապատից, մարդկային ճակատագրից և ցաւած է ու սրանեղած իր յուսահատ անկարողութեան մէջ։ Ամբողջ դարեր երկնքից ու հանդերձեալ կեանքից խօսող կրօնն այլ ևս չի բաւականացնում նրան, այնքան շատ բան խոստացող փիլիսոփայութիւնը Օգիւստ Կոնտի բերաւ նով հրաժարուեց մետաֆիզիկայից և վերջիվերջոյ հասաւ Շոպենհաուերի և Հարտմանի յոռետեսութեանը, որոնք մարդկային կեանքի նպատակը տեսան հնդկական Նիրվանայի անխուսափելի և ամեն ինչ ընդգրկող Նիրվանայի մէջ։ Եւ ի վերջոյ Մեյնստրեմը—Շոպենհաուերի աշակերտը հնարաւոր համարեց ասել թէ՛ «Ես մեկնեցի Շոպենհաուերի ապրելու կամքից և հասայ մեռնելու կամքին, որպէս վերջնական ելք» և թէ՛ «տիեզերքը շարժուում է դէպի չըզոյութիւնը», որ նրա նպատակն է։ Եւ իր վարդապետութեան հաժաձայն այս յուսահատ խեղճ վերջ տուեց իր կեանքին հազիւ 35 տարեկան հասակում։

Ահա թէ ինչու ասացի, որ Մեյնստրեմի գիրքը ժամանակի նշան է, ժամանակի պահանջ։ Նա գալիս է ընդդէմ այս մօայ հոսանքների, գալիս է ասելու, որ կեանքն ու աշխարհը եթէ լաւ չեն, հնարաւոր է լաւացնել առողջ կամքի, անդադրում աշխատանքի և դէպի գիտութիւնը տաժած անպայման հաւատի միջոցով։ Ընկճուած ու յուսահատուած հոգիների ձեռքից բռնած նա վեր է բարձրացնում նրանց և ցոյց տալիս մի հեռաւոր շող տիրող համատարած խաւարի մէջ։

Անշուշտ՝ այս մի հատիկ գիրքը չէ, որ պիտի կարողանայ յուսախար մարդկութիւնը փրկել և նրան ապրելու եռանդ ներշնչել։ Նրա եզրակացութիւններն՝ ինչպէս ասացի՝ անթիւ գիտական վէճերի առիթ տուող թէորիաներ միայն կարելի է համարել, որոնցից գուցէ և շատերը չը հաստատուեն ապագայում։ Բայց այդ բոլորով հանդերձ Մեյնստրեմի բարոգը, կամ աւելի ճիշտ՝ գիտական վարդապետութիւնն այն առաւելութիւնն ունի, որ նա չի ասում թէ այս աշխարհը «բոլոր հնարաւոր աշխարհներից լաւագոյնն է», չի պնդում, ինչպէս բոլոր կրօնները, թէ մարդկային երջանկութիւնը կայանում է իր ցաւերով լի ճակատագիրը անպայմանօրէն կրելու մէջ, չի ասում, թէ մարդը ողորմելի է և անզօր, տիեզերքի մէջ մի ճիճու է, որ միայն տառապել գիտէ։ Ընդհակառակը նա կուռում է հէնց այս կոյր հնազանդութեան դէմ և այն ոչ թէ պերճախօսութեան արուեստով, օգի մէջ կախուած մետաֆիզիկայով, այլ գիտական ապացոյցներով, անձնական գիտական փորձերի վրայ հիմնուած։ Նա պնդում է, որ մարդկային ցաւոտ ճակատագրի մէջ փոփոխութիւն հնա-

բաւոր է, որ մարդը նոյնիսկ բնական օրէնքներով այսքան տառապանք կրելու պարտական չէ, որ մահը այս աստիճան սարսափելի չը պիտի լինի, որ կիներ այդ զարհուրելի երկունքը չը պէտք է ունենայ և որ մի խօսքով մի կատարեալ հոգեկան կերպարանափոխութիւն, արդիւնք փիլիկականի՝ հնարաւոր է, գիտնական բժշկի շրթունքներէջ հնչուող այս վարդապետութիւնը դառնում է մարտական, մի սկտիւ առաքինութիւն, որ զալիս է պայքարելու մարդկային սև ճակատագրի դէմ, որ ոչինչ չի ծածկում, այլ լայն կերպով բաց է անում վէրքերը և հնար է մտածում բուժելու առանց զերբնականի միջամտութեան, այլ սոսկ մարդկային հանճարի կարողութեամբ, արդի և մանաւանդ ապագայ գիտութեան մատակարարած հզօր միջոցներով։ Իրաւունք ունի նա իր այս հետաքրքիր աշխատութիւնն անուանել *Essai de philosophie optimiste*, — «Լաւատես փիլիսոփայութեան մի փորձ»։

Տեսնենք այժմ, թէ ինչու՞մն է կայանում այդ լաւատես փիլիսոփայութիւնը, որոնք են նրա էական հիմունքները, և մինչև որ աստիճան կարող է պատասխանել ժամանակակից կիզիչ հարցերին և տիրող յոռետեսութեան հանդէպ մի դարման հանդիսանալ։

Մարդկային բնութիւնը զանազան դարերում փիլիսոփայութեան և կրօնի կողմից տարբեր վերաբերմունքի առարկայ է եղել։ Մերթ արհամարհուած, մերթ սրբագործուած, մերթ ըստորադրած, մերթ բարձրացրած, նա շարունակել է սակայն բոլոր ժամանակների խոշոր մտածողների մասհոգութեան առարկան լինել։ Զանազան ժամանակներում փորձեր են եղել նոյնիսկ նրա մէջ փնտրել մի հաստատուն մտքալի հիմունքները և նրա վրայ բարձրացնել մարդկութեան երջանկութեան շէնքը։

Այսպէս յայտնի է, որ հին յոյները մարդկային բնութեան աստուածացումն ստեղծեցին։ Գեղարուեստը նրանցում եղաւ մարմնի կատարեալ ձևերի վերարտադրում, իսկ փիլիսոփայութիւնը որպէս կատարեալ ու երջանիկ կեանք հռչակեց մարդկային բնութեան բոլոր կողմերի համապատասխան զարգացումն, մի կատարեալ համերաշխութիւն հոգեկան և մարմնական բոլոր յատկութիւնների մէջ։

Դեռ Պլատոն բարեւոյ իր իդէան կապեց մարդկային բնութեան այդ ներդաշնակութեանը, այդ հարմոնիային, և իր աշակերտը Արիստոտել վայելքի զաղափարը, որպէս վերջնական նրպատակ իւրաքանչիւր գործողութեան, աւելացրեց ուսուցչի հոկտեմբեր, 1903.

հարմոնիային, ինչպէս գեղեցկութիւնն ու առողջութիւնը կապուած են մարդկային մարմնի կատարելութեանը:

Միևնոյն գեղեցկութեան, կատարելութեան և հարմոնիայի գաղափարներն էին, որոնք յետոյ հիմունք դարձան էպիկուրեան զգայասիրութեան, ըստ որի «վայելքը մի բնական բարիք է, այսինքն մի կացութիւն, որ համապատասխանում է բնութեանը մի ներքին բաւականութիւն պատճառելով»: Մօտաւորապէս նոյն բանը կրկնեցին ստոյիկները հռոմէական կայսրութեան վերջում, միայն նրանք վայելքի գաղափարի տեղը դրին արդար կեանքի գաղափարը ըստ բնութեան:

Վերածնութիւնը՝ սիողաստիկայի շնորհիւ հազար տարի անտրդուած մարդկային մարմինը կրկին լոյս աշխարհ հանեց նրա մերկութեան բոլոր հմայքով, և այնուհետև մինչև մեր օրերը բոլոր բացիոնալիստ փիլիսոփայութիւնները մարդկային բնութեանը համապատասխան կեանքը նկատեցին որպէս բարոյական և հաստատուն անհերքելի լոգիկայի վրայ: Էկոսեան փիլիսոփայական դպրոցն Անգլիայում և ֆրանսիական բացիոնալիստ փիլիսոփայութիւնը XVIII դարում՝ վերածնութեան տրագիկականերին հաւատարիմ դասական բարոյականութիւնը որպէս միակը բնութեան համապատասխան և տրամաբանական հոշակեցին: Մինչև իսկ մեր օրերում Դարվին և Սպենսերնոյն մորալի ջատագով հանդիսացան: Ըստ Սպենսերի մորալը պէտք է այնպէս առաջնորդուի, որ կեանքը՝ որքան հնարաւոր է՝ լայն ու արձակ դառնայ: Մարդի ֆիզիկական կատարելութեան համար նոյնպէս անգլիական փիլիսոփայութիւնը որպէս կրիտերիում ընդունում է «մարդկային բոլոր օրգանների ամենալիւր կարողութիւնը կատարելու իրանց դերը»:

Գուցէ ոչ մի հարցում բացիոնալիստ փիլիսոփայութեան և կրօնի մէջ տարբերութիւնն այնքան մեծ չի եղել, որքան երբ խնդրը մարդկային բնութեանը, մարմնի բնական իրաւունքներին է վերաբերուել: «Մինչդեռ բոլոր ժամանակների բացիոնալիստ փիլիսոփաները, ասում է Մեհնիկով, մորալի հիմունքը փնտրում էին մարդկային բնութեան մէջ, որը նրանք համարում էին էականապէս բարի և նոյնիսկ կատարեալ, շատ կրօնական վարդապետութիւններ դրա հակառակ բարոյութիւն էին բոլորովին տարբեր գաղափարներ նոյն հարցի մասին»:

Կրօնները հանդերձեալ կեանքի մեծ առեղծուածը միանգամ ընդմիշտ լուծելու համար ստեղծեցին մարմնի և հոգու մէջ յայտնի անտագոնիզմը: Մարմինը որպէս աղբիւր ամենատեսակ ցաւերի և չարիքի, արժանի չէր ուշադրութեանը հոգացողութեան և խնամքի առարկան նրանց համար հոգին էր: Հոգու

առաւելութեան, գերազանցութեան այս սկզբունքն էր, որ ծրնունդ տուեց ասկետականութեան և որ արտայայտուեց այնքան ժողովուրդների մէջ՝ զանազան ձևերով։ Բուզդան ամենակտրուկ ձևով է յայտնել իր կարծիքը մարմնի աղտեղութեան մասին։ Կանանց բնակարանն այցելելուց յետոյ ուշք դարձնելով իր մարմնի վրայ՝ նա դանում է, որ «տոների ծայրերից մինչև վեր, մինչև ուղեղի վերջը, մարմինը ծնուած է աղտեղութիւնից, դործում է աղտեղութեան մէջ, և թափում է աղտեղութիւն»։... Ի՞նչ է այն իմաստունը, որ այս բոլոր տեսնելուց յետոյ իր սեփական մարմինը չի նկատի որպէս թշնամի»։

Քրիստոնէութեան IV և V դարերում մարմնի աղտեղութեան, անպիտանութեան գաղափարը բռնում է բոլոր հասարակութիւնները, մահացու կոխ է սկսում մանաւանդ սեռական կեանքի դէմ, խոտաճարակների, կիսախելագար ճգնաւորների, իրանց մարմինը զանազան հրէշաւոր տանջանքների ենթարկող մարդկանց թիւը սարսափելի բազմանում է. թուում է, թէ մարդկութիւնը վերադառնում է նախնական անասնային վիճակին, երբ կիսավայրենի մարդը մերկ թափառում էր անտառներում։

Պէտք եղաւ այն ահագին շարժումը, որ առաջ բերեց վերածնութիւնը կրօնի, գիտութեան և գեղարուեստի աշխարհում մի շարք մեծ մտածողներ ու նահատակներ մտքի և խելով ազատութեան, որպէսզի մարդկային բնութիւնը կրկին իր արժանի տեղը գրաւի։ Քաղաքակիրթ մարդկութիւնից դուրս վայրենիների և կիսավայրենիների մէջ եւ մարդկային մարմինը չափ տեղ առանձին յարգանքի և ուշադրութեան առարկայ չէ, ասում է Մեհնիկով։ Յայտնի է վայրենիների սովորութիւնն իրանց հասկացած եղանակով և արուեստով կատարելագործել իրանց մարմինները, այն հազարումի՝ այլանդակութիւնները, որ նրանք կատարում են մարմնի զանազան մասերում։

Այս ընդհանուր փոխափոխական բարոյագիտական հակիրճ տեսութիւնից յետոյ Մեհնիկով եղբակայնում է.

«Գոյութիւն ունեցող բնական պայմաններից դժգոհութիւնն ուրեմն չափ տարածուած է մարդկային սեռի մէջ։ Բընականապէս հարց է ծագում, թէ հնարաւոր է արդեօք մի ընդհանուր սկզբունք դնել մարդկային բնութիւնն ըմբռնելու այսքան տարբեր եղանակներին։ Պարզ է սակայն, որ մարդկային բնութեան հարցը բոլոր ժամանակներում հետաքրքրել է մարդկութիւնը և խաղացել է չափ խոշոր դեր, բարւոյ և գեղեցիկ հասկացողութիւնների մէջ»։

«Ժամանակ է, շարունակում է գիտնական հիդրնակը, այս

պրորոկներ ենթարկել րացիոնել ուսումնասիրութեան՝ առաջնորդուելով զիտական ամենախիստ մեթոդներով, որոնցից կարելի է օգտուել մեր ժամանակներում: Մենք կը փորձենք մի գաղափար կազմել մարդկային բնութեան, նրա կատարելութիւնները և թերութիւնները մասին»:

Բազմաթիւ կենդանական և բուսական աւելի կատարեալ օրգանիզմներ անկարող լինելով բնութեան պայմաններին յարմարուել՝ մեռել ու անհետացել են. մինչդեռ ուրիշ անկատարները բռնել են նրանց տեղը՝ առաջ գալով աւելի ուշ ժամանակներում: Այստեղից Մենչիկով գալիս է այն նշանաւոր եզրակացութեան, որ բնութեան մէջ չը կայ յարատեւ յառաջադիմութեան մի կոյր ձգտում: Թւելով բազմաթիւ մեռած կենդանական ցեղեր՝ Մենչիկով ասում է.

«Այս փաստերը հերքում են այն գաղափարը, որ արտայայտուել է բաղմիցս, որ իբր թէ բնութեան մէջ գոյութիւն ունի տիեզերական յառաջադիմութեան մի օրէնք, որը ձգտում է աւելի և աւելի կատարեալ օրգանիզմներ առաջ բերել»:

Բնութեան մէջ ըստ Մենչիկովի գոյութիւն ունին բազմաթիւ ակնյայտ աններդաշնակութիւններ: Քիչ չեն այն կենդանիները, որոնք աշխարհ են զալիս անպատրաստ՝ գոյութեան կոիւր տանելու, ինչպէս և շատ են նրանք, որոնց ինքնապաշտպանութեան բնազդը միանգամայն սխալ է և խաբում է՝ նրանց կորստեան մասնելով: Ո՞վ չի տեսել ամառ ժամանակ թեւաւոր միջատների այն անազխ բազմութիւնը, որոնք խմբում են կրակի շուրջը լոյսով զբաւուած և մեռնում են՝ այրուելով բոցերի մէջ: Հետաքրքիրն այն է, որ վառուղիները միայն արուներն են, որոնք լոյսի ազդեցութեան տակ սեռական գրգիռով բռնուած՝ նետուում են դէպի բոցը, կարծելով այնտեղ՝ լուսաւոր կէտերի մէջ գտնել էգերին՝ ստանց կարողանալու հաշիւ տալ իրանց սպառնացող վտանգի մասին:

Սրանց հակառակ բնութեան մէջ բազմաթիւ են այն կենդանիները, որոնք սքանչելի կերպով յարմարւում են արտաքին պայմաններին, որոնց ցեղը գիմանում է անխուսափելի ընտրութեանը սերունդէ սերունդ: Այսպիսի օրգանիզմները նա համարում է պատշաճ և ներդաշնակ բնութեանը, և սրանք են իսկապէս բռնում աշխարհը, որովհետեւ անկատարները մեռնում են շարունակ:

«Երկրի վրայ մարդու երեւուոց շատ առաջ, եղբակացնում է հեղինակը, կային արդէն հրջանիկ արարածներ՝ կեսնքի

պայմաններին համապատասխան դատողութիւններով, ինչպէս կային նաև գծադրչ օրգանիզմներ, որոնք հետևում էին իրանց սխալ, անհամապատասխան բնազդներին և վնասում կամ մեղհում էին: Եթէ այս կենդանիները կարողանային խորհել և մեղհադորդել իրանց տպաւորութիւնները, պարզ է, որ յաջողակները... լաւատեսների շարքը կ'անցնէին: Նրանք կ'ասէին, որ աշխարհը ստեղծուած է ամենակատարեալ կերպով, և որ բաւական է հնազանդուել սեփական բնազդին՝ բաւականութեան ու նոյնիսկ կատարեալ երջանկութեան հասնելու համար:

«Իրանց հակառակ աններդաշնակ, կեանքի պայմաններին անհամապատասխան կենդանիները կ'արտայայտէին ամենայոռետես գաղափարներ... Նրանք մեղ կ'ասէին, որ աշխարհը բաւական չէ ամենալաւ ձևով, և որ շատ աւելի լաւ կը լինէր, եթէ նա բոլորովին գոյութիւն չ'ունենար:»

Եւ այսպէս բնութեան մէջ կենդանական օրգանիզմների շատ շատերը միանգամայն աններդաշնակ են արտաքին պայմաններին նոյնիսկ ներկայումս և դեռ քանի-քանի սերունդներ ըստ Դարվինի թէորիայի եկել են և անցել՝ անկարող լինելով պահպանել իրանց գոյութիւնը:

Այս բոլոր ներդաշնակ ու աններդաշնակ օրգանիզմների մէջ որն է մարդի տեղը: Նա, որ համարում է բնութեան լաւագոյն արտադրութիւնը, կատարեալապէս բոլոր օրգանիզմների մէջ, արդեօք արտաքին պայմանների դէմ ունի անհրաժեշտ յարմարութիւնները, նրա բնութիւնը ներդաշնակ է կեանքին, թէ աններդաշնակ, և թինչև որ աստիճան ընդունակ է տանել գոյութեան կոիւր:

Մ'ընդհիմով չի տատանւում, նրա համար մարդկային օրգանիզմը և հետևապէս մարդկային բնութիւնը նոյնքան՝ նոյնիսկ աւելի՝ անկատար, աւելի աններդաշնակ է, քան շատ և շատ ուրիշ ստոր կանգնած կանդանիներինը:

Եւ. ահա թէ ինչու:

Ո՞րտեղից է գալիս մարդը:

Երկար ժամանակ հաւատացած էին, ասում է հեղինակը, որ մարդը արդիւնք է տիեզերքից անկախ մի առանձին ստեղծագործութեան, աստուածային առանձին ուշադրութեան: Դարվին և Հիւքլէյ, նրանց հետ բազմաթիւ ուրիշ բնագէտներ ջրեցին այդ լեզենդայի արսուրդը, «մարդկային օրգանիզմի մանր-բաման ուսումնասիրութիւնը ցոյց տուեց վերջնական ձևով, որ մարդը սերտ ազգակցութեան մէջ է կատարեալ և մարդանը-

ման կապիկներին հետո Շիմպանզէի և օրանգուտանգի դիւարը հրանարաւորութիւն տուեց համեմատել այդ կենդանիներին մարդի հետ, և բազմաթիւ նշանաւոր դիտնականներ, նրանց հետ և մեծ լինէն, մարդկային ցեղը մօտիկ դտան մարդանման մեծ կապիկներին»:

Այդ համեմատութիւնը Մեհնիկով վերսկսում է իր աշխատութեան մէջ և իւրը աղիքի, ուղեղի վերջաւորութիւնների, արեան զնդակների, սաղմի (յղութեան մի քանի աստիճաններում), ատամների ակնյայտ նմանութեամբ մարդու և կապիկի մէջ՝ հասնում է նոյն եզրակացութեան— թէ ընտելեան թագաւորը ծագում է այն ողորմելի կենդանիներից, որոնք այնպէս զուարճայնում են մանուկներին կենդանաբանական այդիններում:

Մարդի կապկային կամ անասնական ծագումը ահագին նշանակութիւն ունի նրա ընտելեան ուսումնասիրելու համար, եթէ աչքի առաջ ունենանք ժառանգականութեան, ատաւիզմի օրէնքները: Մարդկային օրգանիզմի մէջ բազմաթիւ են մնացորդներ նրա անասնական ժառանգութիւնից, որոնք վաղուց է այլեւս ոչ մի օգուտ չ'ունեն իր տիրոջ համար, և որոնցից նա դեռ չի ազատուել:

Բայց ինչպէս կատարուեց այդ թռիչքը կապիկից մինչև մարդը: «Հաւանական է, ասում է Մեհնիկով, որ որեւէ մարդանման կապիկ իր սպեալֆիի յատկութիւնների փոփոխութեան մի շրջանում ծնունդ է տուել երեխաների՝ բոլորովին նոր ընդունակութիւններով: Ուղեղը՝ անբնական մեծութեամբ, տեղաւորուած ահագին դանդի մէջ, հնարաւոր դարձրեց մտաւոր կարողութիւնների արագ զարգացումն, որ շատ աւելի կարող եղաւ, քան իր ծնողներինը և քան առհասարակ իր սկզբնական տեսակը: Այս առանձնապատկութիւնը անցաւ յաջորդներին, և որովհետեւ նա առաջնակարգ կարեւորութիւն ունէր գոյութեան կրուում, նոր ցեղը կարողացաւ դիմանալ, բազմանալ և իշխել: Խնկրի արտակարգ զարգացումը անհրաժեշտապէս պիտի առաջ բերէր աւելի լաւ ընտրութիւն կերակրի, և պիտի վերջանար աւելի մարսական ուտելիքների պատրաստութեամբ: Այս պայմաններում ծնօտները բնականապէս նախկին ծանր աշխատանքը չ'ունէին, մանաւանդ որ ատամները այլեւ չէին ծառայում իբր պաշտպանութեան գէնքեր՝ ինչպէս առաջ, և կամաց-կամաց նրանց զարգացումը թուրացաւ»: Որպէս ապացոյց իր ասածի, Մեհնիկով մէջ է բերում պիեմոնտցի Ժակ Խոտի անունով մի երեխայի օրինակը, որի ապշեցուիչ յիշողութիւնը նրան հնարաւորութիւն էր տալիս երկու բոլորում բազմապատկել երկու

չարք թւեր 6—7 անգամից կաղմուած իւրաքանչիւրը, եւ այդ երեխան մի աղքատ զիւղացու որդի էր, սկզբում ոչխարներ էր պահում: Վեց տարեկան հասակում արտայայտուեց նրա ապշեցու: Ինչ յիշողութիւնը: Նրա ծնողներից և ազգականներից ոչ մէկը այդպիսի յիշողութիւն չի ունեցել: Հետեւապէս անկարելի էի դառնում ընդունել, որ այդ յատկութիւնը առաջ է եկել ներանում յանկարծակի: Առաջին մարդիկ հաւանականաբար այսպիսի հանճարեղ մանուկներ են եղել՝ ծնուած մարդանման կենդանիներից:

«Մարդու բազմաթիւ չը զարգացած օրգանները, շարունակում է հեղինակը, տալիս են էլի մի նոր ապագայ նրա կենդանական ծագման, և մատակարարում են փաստեր դիտութեանը մարդկային բնութեան փիլիսոփայական բմբռնումը սահմանելու համար»:

Մարդու ծագման վերաբերեալ այս թէորիան՝ ինչպէս յայտնի է՝ նոր չէ. Դարվինից յետոյ բազմաթիւ աշխատանքներ են նուիրուած այդ հարցին: Մեջնիկով իր դործի մէջ համադրել է այդ գիտական աշխատանքների եզրակացութիւնները և այսպիսով թէորիան աւելի համադրիչ, աւելի հաւանական դարձրել փաստերի հարստութեամբ: Այս թէորիայից հանած փիլիսոփայական հետեւանքները սակայն ոչ միայն նոր են, այլև վերին աստիճանի օրիգինալ:

Ձը նայելով իր ծագմանը, որ նրան կապում է կենդանական աշխարհի հետ, մարդը սակայն կարողացել է ահագին առաջագիմութիւն անել: Նրա արտաքինը և ներքինը ենթարկուել է մի էվոլյուցիայի, որի արգիւնքն է ժամանակակից մարդկութեան մշակուած տիպը: Նա կարողացել է նոյնիսկ շատ անգամ ուղղել բնութիւնը և կատարելութեամբ նրանից անցնել: Նրա ձեռքի տակ մշակուած բոյսերը գերազանց են ազատ բնութեան մէջ աճածներից, և նրա ստեղծած երաժշտութիւնը, ասում է Մեջնիկով, բարձր է բնութիւնից, որովհետեւ բնական ոչ մի մեղմիկ չի կարող համեմատուել երաժշտութեան լաւագոյն կտորների հետ:

Մարդկային մարմնից աւելի զեղեցիկը երեակայնու փորձերը սակայն մնացել են միշտ անպտուղ. բնութիւնը այդտեղ իշխում է գերազանցապէս: Գեղեցկութեան դասական բմբռնումը, որ լբրի իղէալ մարդկային մարմինն ունէր, այսպիսով բոլորովին արգարանում է: Տարաբաղդաբար այդ կատարելութիւնը, որ յատուկ է մարդկային մարմնի ձևերին և նրա զիմագը-

ծերին, չի կարող վերաբերուել նրա ամբողջ օրգանիզմին: Այս բանի մէջ համոզուելու համար բաւական է մի հայեալք նետել այդ օրգանիզմի մի քանի մասերի վրայ»:

Իր ծագումը առնելով կենդանիների, մարդկային օրգանիզմը՝ չը նայելով ահագին էվոլյուցիային, դեռ շարունակում է պահպանել իր մէջ բազմաթիւ աւելորդութիւններ, որոնք իրանց որոշ դերն ու օգտակարութիւնն են ունեցել իր նախահայրերի՝ օրինակ կապիկների համար, և որոնք այժմ մարդկային ներկայ բնութեան մէջ ներկայ, կենսական պայմաններում հանդիսանում են աններդաշնակութիւններ և նոյնիսկ վնասակար:

Իր թեզն ապացուցանելու համար հեղինակը մասնաւորապէս կանգ է առնում որդանման աղիքի կամ ազանդիսի վրայ, որ կազմում է մի կատարեալ աններդաշնակութիւն մարդկային օրգանիզմի մէջ և հանդիսանում է բազմաթիւ հիւանդութիւնների և նոյնիսկ մահացու հիւանդութիւնների պատճառ, աղիքի հիւանդութեան 8—10% մահացու է, իսկ օգտակարութիւնը համարեալ ոչինչ, որովհետև օպերացիայի ենթարկուած և ազանդիսից ազատուած անձինք բնաւ վատ չեն զգում իրանց:

«Չափազանցութիւն չի լինի ասել, շարունակում է հեղինակը, որ սչ միայն որդանման աղիքը, այլ նոյնիսկ ամբողջ մեծ աղիքը մի աւելորդ օրգան է մեր օրգանիզմի մէջ, որի վերացնելը չատ լաւ հետեանքներ կարող է ունենալ»:

Ատամներից միանգամայն անօգուտը իմաստութեան ատամներն են, և սակայն որքան անգամ նրանց դուրս դալը զուգընթաց է ամենածանր հիւանդութիւնների, յաճախ մահացու: Սրանք ևս մի փաստ են մարդու բնութեան մէջ զոյութիւն ունեցող աններդաշնակութեան:

Կերակրի ընտրութեան բնազդը նոյնպէս մարդկային օրգանիզմի մէջ ներկայացնում է մի կատարեալ աններդաշնակութիւն: Յայտնի է, որ երեխաները որոշ հասակում բերան են տանում և յաճախ կուլ տալիս, ինչ որ ձեռքերն է ընկնում: Նոյնիսկ հասակաւոր մարդիկ չատ անգամ թունաւորում են կանաչեղէններով, առանց որ բնազդը նրանց զգուշացնել կարողանայ:

Շատ աւելի խոշոր և հետեանքներով չատ անգամ անրայատրեկի աններդաշնակութիւններ են նկատուում և սեռական գործարանների մէջ, Թւում է, թէ մարդկային բնութիւնը օրգանիզմի ամենաքնքրոյշ և ամենակարեւոր մասերում չատ աւելի ենթակայ է անպատեհութիւնների, որոնք արդիւնք են այդ մասերի աններդաշնակ կազմութեանը:

Սեռական բնազդը նոյնպէս արտայայտուում է կեանքի մէջ

չատ անդամ ամենաանբնական, նոյնիսկ անհասկանալի երևոյթներով, որոնք բոլորովին հեռացած են յինուամ նորմալ պայմաններից և ապշութիւն ու զղուանք առաջ բերում: Շոպենհաուեր իրաւունք ունի, երբ այս անբնական վաստերի առաջ բացատարի (սերունդ առաջ բերել) հակառակ մի երևոյթ, որ տեղի է ունենում սակայն բնութեան ձեռքով, մի այնպիսի չը լուծուած պարագոքս է, որի բացատրութիւնը պրոբլեմներէից ամենադժուարն է...» Նկատուած է յաճախ, որ փոքրիկ երեխաների մէջ զարթնում է սէր և կիրք դէպի կիներ, նոյնիսկ խանդութիւն դէպի սիրած էակը: Այսպէս յայտնի է, որ Դանթէն իննը տարեկան էր, երբ սիրահարուէի Բէթալբրիչէի վրայ. Կանովան սիրահարուած էր հինգ տարեկանից, իսկ Բայրընը եօթ տարեկան էր, երբ սիրեց Մարի Դիւֆին:

Ոչ պակաս բազմաթիւ են աններդաշնակ երևոյթներ ընտանեկան յարաբերութիւնների մէջ: Ծննդաբերութեան դէմ ձեռք առնուած բազմաթիւ արուեստական միջոցները, որ զարդանում են քաղաքակրթութեան հետ, արուեստական վիժումները, որոնք օր-աւուր մեծ ծաւալ են ընդունում, նոյնիսկ չը նայելով օրէնքների խստութեան: 1872 թ. Պոլսում տաճարում տալ ընթացքում 3000 արուեստական վիժման դատ է տեղի ունեցել: «Չարմանալի չէ, նկատում է հեղինակը, որ արեւելքում ապօրինի ծնուած երեխաները այնպէս հաղաղիւտ են»:

Արուեստական վիժումը սակայն նոր ժամանակների տրդիւնք չէ: Հին, դասական ժամանակները այդ գիտէին, յոյները կատարում էին աշկարայ, և օրէնքը չէր տրվելում: Պլատոնը խորհուրդ էր տալիս դպեալներին վիժումն առաջ բերել, իսկ Արիստոտել պատւիրում էր վիժումն այն դէպքում, «երբ ամուսնացած կիներ յղանում էր հակառակ որեւէ նախատեսութեան»:

«Մարդկային սեռի մէջ նորածին երեխաների կոտորածն էլ չափազանց տարածուած է եղել: Յոյներն ու հռոմայեցիները նորածինների ապրելու իրաւունքը չէին ճանաչում: Հին գերմանացիները իրաւունք ունէին ձգել իրանց նորածիններին: Իսլամից առաջ արաբները սովորութիւն ունէին իրանց նորածին աղջիկներից չափերին կենդանի թաղել: Հնդկաստանում նման մի սովորութիւն խիստ տարածուած է: Չինաստանում երեխաներ ձգելը յայտնի սովորութիւն է... այնտեղ կոտորում են նորածին աղջիկներին. մի գիւղում վիճակագրութիւնն ապացուցել է, որ երկու երեխայից աւելի ունեցող մայրերը սպանել են գոնէ մի-մի հատ իրանց զաւակներից»: Ծնողական բնազ-

դի այսպիսի քիչ զարգացումը գուցէ և պատճառ է եղել շատ բառաների ոչնչանալուն:

Այսքան բազմաթիւ են մարդկային օրգանիզմի և նրա բնաւորութեան մէջ անհասկանալի խոտորումները, յաւալի աններդաշնակութիւնները, որոնք ամենքը միանալով՝ դառնում են այնքան դժբաղդութիւնների, տանձանքների, արցունքի աղբիւր: Մի կողմ թողնելով գեռ օրգանական թերութիւնները, որոնցից առաջացած վնասը կրողը ինքը անհատն է, որի պատճառած յաւը լծանում է օրգանիզմի մէջ, դարձնալ գոհների թիւը անհաշիւ է: Ո՞վ կարող սահմանել, օրինակ, թէ որքան արցունք է նստել մարդկութեանը հէնց ծնողական զգայմունքի թուլութիւնը, որ արտայայտւում է զաւակների կոտորածով, կամ ինչքան յաւերի աղբիւր է եղել սեռական անբնական բռնադղը, որ արտայայտուել է գէպի անչափահասները, գէպի շատ անդամ սեռակիցները: Երբ սեռական բնազդին կապուած բոլոր ոճիրները մարդ աչքի առած է ունենում, հասկանալի է դառնում, թէ ինչո՞ւ բոլոր կրօնները այնպէս ուշադիր են գէպի սեռական կեանքը, և ինչո՞ւ լաւագոյնը համարել են բոլորովին ջնջել մարդի մէջ կիրքը:

Եւ այսպէս ազգակցական, կերակրի ընտրութեան, և սեռական բնազդները մարդու մէջ՝ ինչպէս տեսանք՝ չափազանց անկատար են և շատ յաճախ մղում են նրան գէպի կորստաբեր ճանապարհների՝ տակնուվրայ անելով նրա անհատական և ուրիշի, մերձաւորի գոյութիւնը:

Զարգացած է արդեօք մարդու մէջ հասարակական բնազդը, նա, որ բոլոր դարերում, բոլոր յեղերի մէջ անտեսական և բարոյական յարաբերութիւնների տեսակէտից խաղացել է առաջնակարգ դեր և որ այնքան զբաղեցրել է մարդկային միտքը: Յայտնի է, որ գեռ Արիստոտել վճռական ձևով ասել է, որ «մարդը համակենցաղ կենդանի է» (l'homme est un animal sociable): Մարդը ամեն տեղ, նոյնիսկ վայրենի մարդը ապրում է մեծամեծ խմբերով, և քաղաքակրթութեան հետ միասին՝ ընկերութեամբ ապրելու այդ ձգտումը դնալով աւելի զարգացել է, որի արդիւնքն է ժամանակակից մարդկային հասարակութիւնն իր բարդ կազմակերպութեամբ, իր օրէնքներով, իր կարգերով, կառավարութեան բազմապիսի եղանակներով:

Հասարակական բնազդի այս ակնյայտին զարգացումը շատ մտածողների հիմք է ծառայել նրա վրայ հաստատել մի րացիոնալիստ մտաւ անկախ մետաֆիզիկայից, մի մտաւ, որ կարո-

դանար մարդկային հասարակութեան բաղդաւորութիւնը ապահովել: Այսպէս՝ ըստ Բիւխների՝ «մարդը լինելով էականապէս հասարակական էակ և որը հասարակութիւնից զուրա ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի կատաղի գաղան, պարզ է, որ ընկերակցական կեանքը նրա վրայ դնում է փոխադարձ պարտականութիւններ, որոնք ժամանակի ընթացքում կազմում են նրա որոշ մորալի սկզբունքները»:

Ըստ հոչակաւոր բնագէտ Հեկկելի՝ Մեր ձեռք բերած ծանօթութիւնը ցոյց է տալիս, որ պարտքի դիտակցութիւնը հիմնուած է ոչ թէ մի ներքին հրամայող զգացմունքի վրայ, այլ արդիւնք է հասարակական բնադրների, որոնք իրական հիմունք են հանդիսանում, և որը մենք գտնում ենք ընկերութեամբ ապրող բոլոր բարձր կենդանիների մէջ: Բարոյական այդ հիմունքը որպէս գերագոյն նպատակ մորալի՝ ընդունում է մի ներդաշնակութիւն ալտրուիզմի և եռասիրութեան մէջ: Եթէ մարդը ցանկանում է ապրել մի լաւ կազմակերպուած հասարակութեան մէջ և բաղդաւոր լինել, նա պարտական է ոչ միայն սեփական բաղդաւորութիւնը միայն փնտրել, այլ և ամբողջ ընկերութեանը, որին ինքը պատկանում է, և մերձաւորներին, որոնք կազմում են այդ ընկերութիւնը»:

Հեկկել սահմանելով այս խիստ որոշ, խիստ բացիոնիկ մորալը, զարմանք է յայտնում, թէ ինչու գարեր են անցնում, և մարդը դեռ չի կարողանում իր ընթացքը համակերպել այսքան հասկանալի, այսքան բնական մի սկզբունքի: Բոլոր հարցը հէնց այդ զարմանքի մէջ է: Ընդունելով հանդերձ, որ մարդկային բնութիւնը անպայման ձգտում ունի գէպի համայնակենցալ կեանքը, ստիպուած ենք ընդունել միաժամանակ, որ զանազան գարեր և զանազան ցեղեր բոլորովին տարբեր կերպով են հասկանում իրանց մորալը: Սէրը կամ ալտրուիզմը գէպի մերձաւորը ըստ տեղի և ըստ ժամանակի իր ընտրութիւնների մէջ արտայայտուել և արտայայտուում է բազմաթիւ սահմանափակումներով, որոնք էականապէս հակասում են բացիոնալիստ մորալի հիմնական սկզբունքներին: Մէկ տեղ մարդը ալտրուիստ է եղել գէպի իր կրօնակիցը, մի ուրիշ տեղ գէպի իր աղգակիցը, հայրենակիցը, մի երրորդ տեղ պարզապէս գէպի իր մօտ ագգականները հայրն հայրն: Նոր ժամանակներում այդ զգացմունքը էվոլյուցիայի ենթարկուելով՝ հասաւ հայրենիքի գաղափարին, և այժմ նորագոյն ժամանակում, մեր օրերում խօսւում է միջաղգային համերաշխութեան մասին: Եւ դեռ այս չէ բոլորը. յայտնի ժամանակում իշխող տեսական և գործնական մորալի մէջ որքան տարբերութիւններ, որքան հակասութիւններ: Քաղաքա-

կան և տնտեսական շահերը որչափ յաճախ գերիշխող են հանդիսանում (եթէ ոչ միշտ) բոլոր միւս բարոյական հայեցակէտերի վրայ, մոռացութեան տալով ցեղական, կրօնական սկզբունքներ: Ազգերի համախմբումները նոյնիսկ մեր օրերում զօրեղ ապացոյց են տեսական մտաւի և գործնականի խոչոր հակասութեան: Ի՞նչպէս չը յիշել նաև միևնույն պետութեան մէջ ապրող, միևնույն օրէնքներով կառավարուող զանազան ցեղերի, կրօնների, լեզուների անվերջ ընդհարումները, Ամերիկայում սևամորթները և սպիտակների փոխադարձ ժահոյու տեսլութիւնը, Աւստրիան կաղմող զանազան հետեւութեան տարրերի անդուլ պայքարը, ժանտախտի պէս աշխարհը վարակող ամօթալի անտիսեմիտիզմը և այլն:

Այս բոլորն ի նկատի առնելով՝ դիտնական հեղինակը գալիս է հետեւեալ յօդուտեւ հզրակայութեան. «Հասարակական բնագոյր նոյնպէս անկարող է լուծել արդարութեան հարցը, որը ստորադասուած է մարդկային գոյութեան ընդհանուր նպատակը կաղմող պրոբլեմին: Հասկանալի է, որ գիտութեան ներկայ միջակում անխուսափելի կերպով մարդիկ կատարում են և մանաւանդ կրում են բաղմաթիւ անարդարութիւններ»: Եւ այս անխուսափելի չարիքը Մեքսիկով կրկին համարում է մարդկային բնութեան աններգաչնակութեան արդիւնք:

Եւ մահը, ըստ երևոյթին ամենից բնականը և ամենաանխուսափելին, որչափով ներգաշնակ է մարդկային բնութեանը: Ճիշտ է, որ նրա պրոբլեմը լուծելու ջանքերը յոգնեցրել են արդէն մարդկային միտքը, որ նրա ոչնչացնող սարսափը մեղմացրեցելու համար անթիւ փորձեր են կոծել, բայց դրա հետ միաժամանակ անխուսափելիի առաջ խոնարհուած միլիոնաւոր սերունդներ ապրել են և ապրել, և դեռ միլիոններ էլ կը դան և կ'անցնեն: Թւում է, թէ այսքան փաստերից յետոյ մահուան և առհասարակ մարդկային ճակատագրի դէմ ըմբոստանալու հնարաւորութիւն չը կայ, ամբողջ բնութիւնը իր էվոլյուցիայով նոյնն է հաստատում, և հետևապէս մարդը պիտի ընդունէր մահը նոյն խաղաղութեամբ, որով դիմաւորում է քուռը, որ նա պիտի համարէր այդ անխուսափելի քայլը զգայութիւնից դէպի անզգայութիւն՝ որպէս մի յաւիտենական քուռ:

Եւ սակայն յայտնի է, որ բնական երևոյթներից և ոչ մէկը այն աստիճան անհասկանալի, նոյնիսկ անարամարտն, անարդար չի թւայել մարդուն, որքան մահը:

Բոլոր մեծ բանաստեղծները համարեա նրա դէմ ըմբոստ

են և իրանց երգերում անխճել են երկինքն ու մարդկային ճակատագիրը: «Ես ապրում եմ, առում է Բայրընը, բայց ապրում եմ մեռնելու համար: Կեանքում ես ոչինչ չեմ տեսնում, որ առելի գարձնէր մահը, բայց մի ընակա՛ն զարշանքից, ապրելու անարդ, բայց մի անյազթելի ընազդից, որը ես առում եմ, ինչպէս ինքս ինձ, և որը սակայն ես ընկճել չեմ կարող»: Մի ուրիշ տեղ Բայրընն ասել է տալիս Կայէնին. «Աւաղ, ես այժմ էլ համարեա չը դիտեմ, թէ ինչ է այն (մահը), և սակայն ես վախենում եմ նրանից: Ես վախենում եմ... չը գիտեմ ինչից»:

Նոյնիսկ այնպիսի մտածող ու հաւատացող, որպիսին է Տոլստոյ իր «Պոստովանքի» մէջ, այսպիսի տողեր ունի. «Վախե՛նալով մահից՝ ես գիմում էի զանազան խորամիտ հնարներ՝ ինքնասպանութիւն չը գործելու համար»: Մտածելով կեանքի մասին՝ նա հասնում է այս սպանիչ եզրակացութեան, թէ... «Կեանքը մի անմառութիւն է: Ես ապրել եմ, աշխատել առաջ քայլել և հասել մի անդունդի, և իմ հանգէպ ոչնչութիւնից բայց ուրիշ բան չեմ տեսնում»:

Գոնկուր իր յիշողութիւնների մէջ պատմում է, որ Ֆլորեր, Տուրգենև, Զոլա, Դոդէ համախմբուելով երեկոն երանցելու միասին՝ յաճախ խօսում էին մահից և նրա սարսափից: Հետաքրքիրն այն է, որ ամենից աւելի մահից դողացողը եղել է նաեւ Բալզակը Զոլան:

Բուդգայական լեզենդան Սակիա-Մունիին տուել է հետեւալ ընորոշ խորհրդածութիւնը հիւանդութեան, ծերութեան, մահուան մասին. «Վայ երիտասարդութեանը, որ քայքայում է ծերութեան ձևերով, վայ մարդկային կեանքին, որ երկար չի տևում, վայ այն վայելքներին, իրձերին, որոնք դալթակղկնում են իմաստունի սիրտը»:

Ինչո՞ւ միայն յայտնի օրինակներ բերել, համարեա ոչ ոք կեանքից հեշտութեամբ չի բաժանւում, եթէ մահը չի հանդիսանում որպէս փրկիչ ֆիզիկական կամ բարոյական անհանդուրժելի ցաւերից: Յայտնի է նոյնպէս, որ տարիների հետ կեանքի ծարաւն աւելի մեծանում է մարդու մէջ, և ծերունիները շատ աւելի ուշադիր են գէպի իրանց օրերը, քան երիտասարդները: Մանուկների երազն է չուտով մեծանալ և նրանք սիրով իրանց աւելի մեծ են երևակայում, ծերերը կ'ուզէին աւելի քիչ տարիք ունենալ: Որչափ ծանր խորհրդածութիւնների առիթ է տալիս միշտ առաջին սպիտակ մազը, ճակատի առաջին կնճիոր:

Մահուան երկիւղը բանականութիւնից խուսափում է. ան-

խուսափելիի հետ սիրով համակերպուելու դատողութիւնը անդոր է, դա մի բնազդ է, որ արտայայտուում է առանց մեր կամքի։ Այդ մտքով էլ բացատրում է Շոպենհաուերը. «Բանա կանութեան յայտնութիւնների տեսակէտից մահից վախնալունք մի հիմունք չ'ունենաք։ Գիտակցութիւնը, որ կազմուած է յայտնութիւններից, մահը չարիք չի կարող համարել։ Եւ մեր «տախ» այս գիտակցական մասը չէ, որ վախնում է մահից, այլ միմիայն մեր կոյր կամքից է առաջ գալիս այդ սարսափը (fuga mortis), որ բռնում է բոլոր կենդանի արարածներին»։

Այս ակնյայտնի աններդաշնակութիւնը՝ ապրելու բնազդի և մահուան մէջ, որ այնպէս բուռն կերպով արտայայտուում է մեռնելու ժամին, զբաղեցրել է բոլոր դարերի մարդկութեան միտքը։ Մասնաւորապէս կրօնները այդ հարցի մենավաճառն են ունեցել։ Ըստ Գիւլօի՝ եթէ մահը դոյութիւն չ'ունենար, նախապաշարմունքներ կարող էին լինել, բայց կրօն՝ ոչ։ «Կրօնը, ասում է նա, գլխաւորապէս մահուան մասին խորհրդածութիւն է»։ Փիլիսոփայութիւնը նոյնպէս իր խոշոր բաժինն ունի մահուան վրայ խորհրդածութիւնների մէջ։

Նոյնիսկ Սոկրատը և Տիցերոնը գտնում են, որ «փիլիսոփայի կեանքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ խորհրդածութիւններ մահուան մասին»։ Շոպենհաուերը գտնում է, որ «մահը փիլիսոփայութեան ներշնչողն է—որ առանց մահի գուցէ և որեւէ փիլիսոփայութիւն դոյութիւն չ'ունենար»։

Այս բոլոր փաստերը հիմք են ծառայում Մենցիկովին եղբրակայնելու հետեւալը. «... Կասկած չի կարող լինել, որ մարդկային բնութիւնը, թէև կատարեալ և գերազանց իր շատ մասերում, ներկայացնում է բազմաթիւ և խոշոր աններդաշնակութիւններ, որոնք մեր այնքան դժբաղդութիւնների աղբիւր են։ Չ'ունենալով կեանքի պայմաններին համապատասխան յարմարութիւնները... մարդկային բնութիւնը յիշեցնում է այն միջատներին, որոնք բնազդով տարւում են դէպի բոցը և այրւում իրանց թևերը»։

Մարդկութեան մանուկ չըջանում անգամ մեր բնութեան այս աններդաշնակութիւնը նկատուել է, և իւրաքանչիւր սերունդ իր ձևով աշխատել է այդ խոշոր թերութեան պատճառած վնասը դարձանել։ Այդ բոլոր փորձերը տարբեր են, բայց հիմունքը միշտ նոյնն է—մի փոքր աւելի բազդաւորութիւն կրկրի վրայ և մի փոքր աւելի մխիթարութիւն մահից յետոյ այն խնդրող անյայտութեան մէջ։

Ա. Ա.ՆԱՐՈՆԵԱՆ

(Վերջը միւս Ձեռն)